ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ **ՆԶՊ**

Թեմա Մարտավարական-ֆիզիկական պատրաստություն

ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխի միջնակարգ դպրոցի ուսուցիչ

Հետազոտող՝ Անդրանիկ Մովսիսյան

Ղեկավար՝ ԱՐԱՄ ՄՈՒՍԱԽԱՆՅԱՆ

ԳՈՐԻՍ 2022

Ներածություն

ՆԶՊ առարկայական ծրագրի նպատակն է՝ զինվորական պատրաստության հիմունքներից նվազագույն գիտելիքներ տիրապետող, արդիական գիտելիքների, գործնական կարողությունների ու հմտությունների միջոցով՝ արտակարգ իրավիճակներում կենսապահովում իրականացնող, հասարակական բարձր գիտակցություն, բարոյահոգեբանական որակներ և վարքային դրսևորումներ ունեցող անձի ձևավորումը:

Ռազմական գործը և զինվորական պատրաստությունը մարդկության պատմության ձևավորման հետ միասին սկսել է գոյություն ունենալ, իսկ «Նախնական զինվորական պատրաստություն»-ը, որպես առարկա մեր իրականաության մեջ կյանքի է կոչվել 20-րդ դարի սկզբներին: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան հնարավորություն է տալիս ձևավորելու մտածող, քաջ և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի:

Հանրակրթական դպրոցում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ուսումնական ծրագիրը կառուցվում է հիմնարար գաղափարների հենքի վրա պարուրաձև սկզբունքով՝ հիմնական դպրոցում սատացած գիտելիքները ընդլայնվում և խորացվում է ավագ դպրոցում: Հիմնարար գաղափարների շուրջ «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրի կառուցումը հնարավորություն է ընձեռում արդյունավետ ապահովելու ներառարկայական և միջառարկայական կապերը՝ նպաստելով զինվորական պատրաստության, առաջին օգնության և անվտանգ կենսագործունեության հիմունքերի վերաբերյալ համակարգային պատկերացումների ձևավորմանը:

ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Այս հետազոտական աշխատանքը կատարելուց հաշվի եմ առել Շուռնուխի միջնակարգ դպրոցի առանձնահատկությունները 2020թվականին Ադրբեջանի կողմից իրականացված ռազմական գործողությունների հետևանքով դպրոցը և գյուղը հայտնվել են թշնամու նշանառության տակ: Այդ իսկ պատճառով այս թեման առավել քան կարևոր եմ համարում:

«Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) առարկայի նոր ուսումնական ծրագրում կատարված որակական փոփոխությունները պայմանավորված են ինչպես ռազմագիտության ոլորտում վերջին տասնամյակում տեղի ունեցած փոփոխություններով և իրավիճակային զարգացումներով, այնպես էլ ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման ձևով՝ օգտագործելով ուսուցման պարուրաձև և վեկտորային մոտեցումները, շարժվելով անհատական պատրաստվածությունից խմբային (ջոկային) պատրաստվածության: Այստեղ առաջնային է ուսուցումը գործնական հիմքերի վրա դնելը, մարտական իրադրությունում և արտակարգ այլ իրավիճակներում անհրաժեշտ հմտությունների և կարողությունների ձեռքբերումը, աստիճանաբար հիմքային որակների ձևավորումից գործնական վարժանքներում դրանց կիրառումը: Կարևորվում է նաև միջառարկայական կապերի զարգացումը և ուսուցողական նյութերի պարզեցումը, ոչ պրոֆիլային թեմաներից ազատումը և արդիական ու կարևոր թեմաների ներմուծումը, ավելի արդյունավետ մեթոդական մոտեցումների, տեղեկատվական նոր տեխնոլոգիաների կիրառումը:

Առաջադրվող ուսումնական ծրագիրը երկու հիմնական ուղղվածություն ունի՝ մասնագիտական հիմունքների ուսուցում և դաստիարակություն: Այն մեծապես համապատասխանում է մանկավարժական գիտության հիմնարար սկզբունքներին՝ օբյեկտիվություն, ուսուցման համակարգվածություն և հաջորդականություն, դիտողականություն և մատչելիություն, գործնական ուղղվածություն, գիտելիքների յուրացում հմտությունների և կարողությունների ձևավորմամբ, սովորողների ակտիվություն (ներքին շարժառիթների ձևավորում և ուսուցման խթանում), առարկայի և ոլորտի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորում և մասնագիտական կողմնորոշում:

Ծրագրի մշակման ժամանակ կարևորվել է այն հանգամանքը, որ մարտական իրադրությունը, արտակարգ իրավիճակները հոգեբանական խոր սթրես են առաջացնում, որի ժամանակ մեծապես արգելակվում են մարդու զգայական, մտածական մեխանիզմները և գործում են միայն մարդու հմտություններն ու կարողությունները: Հմտություններ ասելով հասկանում ենք վարժանքների շնորհիվ մինչև ավտոմատիզմի հասցված մարդու գործնական կարողությունները, որոնք նա իրականացնում է ինքնաբերաբար՝ ուշադրությունը կենտրոնացնելով միայն արագ փոփոխվող իրավիճակի վրա և արձագանքելով դրան: Մասնավորապես, հրաձգության ժամանակ զինվորը չպետք է մտածի շնչառությունը կանոնավորելու, զենքը ճիշտ պահելու, աչքի ֆոկուսը կանոնավորելու, ձգանը քաշելու տեխնիկայի վրա՝ դրանք իրականացնելով մեխանիկորեն, իսկ ուշադրությունը կենտրոնացնում է միայն թիրախի ընտրության վրա: Նույնը՝ հառակորդի կրակոցին, արկի պայթյունին արձագանքելու կամ զենքի կիրառման անվտանգության կանոնները պահպանելու, պատահական կրակոցներից խուսափելու հետ կապված:

Հմտորեն մշակված շարժումները՝ արագ կամ քողարկված տեղաշարժը արդյունավետ են դարձնում զինվորի գործողությունները և շատ դեպքերում ապահովում նրա անվտանգությունը:
Ֆիզիկական կարողությունների (հավասարակշռության պահպանում, շարժումների կոորդինացիա, ճկնություն, ճարպկություն, ուժ, դիմացկունություն) և հմտությունների ձևավորումը սովորաբար իրականացվում է ֆիզիկական կուլտուրա առարկայի դասընթացում, իսկ ՆԶՊ-ի դասընթացում իրականացվում են զինվորի համար նախատեսված վարժաձևերի կատարման կարողություններն ու հմտությունները՝ 8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններում:

Եզրակացություն

Ամենևին չնսեմացնելով հանրակրթական դպրոցներում դասավանդվող մնացած առարկաների դերն ու նշանակությունը մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում , հաշվի առնելով մեր տարածաշրջանի ռազմաքաղաքական դրությունը, մեր երկրի աշխարհագրական դիրքը , հարևան պետությունների հետ տարածքային խնդիրները և մեր մարդկային ու նյութական սահմանափակ հնարավորությունները առանձնահատուկ նշանակություն է ստանում հանրակրթական դպրոցներում «Նախնական զինվորականատրաստություն» առարկայի դասավանդումը և ռազմահայրենասիրական դաստիարակությունը:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասավանդումը հանրակրթական ուսումնական հաստատություններում համապետական կարևորագույն խնդիր է լուծում՝ նախազորակոչային տարիքի պատանիներին նախապատրաստում է զինվորական ծառայության, սովորողներին զինում անհրաժեշտ նվազագույն ռազմական գիտելիքներով, ապահովում անվտանգ կենսագործունեության հիմունքների յուրացումը ինչպես նաև նպաստում է ազգային բանակում ծառայելու և հայոց բանակի պատմական ավանդույթները շարունակելու սեփական պարտքը գիտակցող, կարգապահ, ֆիզիկապես և բարոյապես առողջ , բազմակողմանի զարգացած, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ, արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվող և աշխատանքային գործունեությանը պատրաստ քաղաքացու ձևավորմանը:

Սովորողների կողմից «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի պետական ուսումնական ծրագրի յուրացումից բացի «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասաժամերը , տարբեր ռազմահայրենասիրական խմբակներն ու ռազմամարզական խաղերը մեծ դեր ու նշանակություն ունեն նաև պատանիների ու աղջիկների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում :

Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի և ռազմահայրենասիրական դաստիարակության պլանավորման և աշխատանքների կազմակերպման գործում մեծ դեր ունեն ուսումնական հաստատության զինվորական զեկավարները:

Բացի դրանից զինղեկը իր մարդկային կերպարով, հայրենասիրական գաղափարներով, զինվորական պահանջկոտությամբ և կարգապահությամբ , ինչպես նաև անձնական օրինակով մեծ դեր է խաղում սովորողների և մանկավարժական կոլեկտիվի կարգապահության ամրապնդման և բանակ-հասարակություն կապերի սերտացման գործում:

Առաջարկություններ
Առաջարկում եմ .
● Հաշվի առնելով մեր պետության առջև ծառացած նոր մարտահրավերները, ավելի շատ ուշադրություն դարձնել հանրակրթական ուսումնական հաստատություններում «Նախնական զինվորական պատրաստություն»առարկային և նրա ուսումնանյութատեխնիկական բազան վերազինելուն և թարմացնելուն:
● Հանրակրթական դպրոցներում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի ծրագրում առաջարկում եմ 1-2 ժամ

հատկացնել ՀՀ ԶՈՒ և հարակից երկրների բանակների սպառազինությունում առկա գերժամանակակից զենքերի (БМ-21 "Град", ТОС-1А «Солнцепёк», БМ-30 «Смерч», «Искандер-М») և անօդաչու սարքերի համառոտ տեղեկությանը: Այդ ժամերը կարելի է վեցնել ՀՀ ԶՈՒ ռազմարվեստի պատմության համար նախատեսված ժամերրից՝ այդ թեմաները «Պատմություն» առարկայի ծրագրում ներառելու հաշվին:

● Հաշվի առնելով զինղեկի մարդկային կերպարի , արտաքին տեսքի , հագուկապի կարևորությունը և այն որ սովորողները ավելի են զգաստանում , ոգևորվում և ավելի լուրջ են վերաբերվում դպրոցներում «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասաժամերին, երբ իրենց ուսուցիչը համազգեստով է, առաջարկում եմ բոլոր զինղեկներին ապահովել միանման, պատական նմուշի զինվորական համազգեստներով , մանավանդ, որ դա նաև օրենքի պահանջ է :

Օգտագործված գրականություն

● «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի դասագրքեր
● «Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները», Գ. Հովհաննիսյան, Ա. Զոհրաբյան և ուրիշներ
● «Նախնական զինվորական պատրաստություն: ՈՒսուցչի ձեռնարկ 8-9 դասարանցիների համար, Վ. Օհանյան և ուրիշներ, «Աստղիկ Գրատուն», Երևան , 2014թ.
● «Շարային պատրաստության մեթոդական ձեռնարկ»: